ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
«ԻՋԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ЗАО« ИДЖЕВАНИ БЖШКАКАН
КЕНТРОН»
ТАВУШСКОГО МАРЗПЕТАРАНА

REPUBLIC OF ARMENIA,CJSC «IJEVANI BJSHKAKAN KENTRON»

377260 ՀՀ ,ք.Իջևան, Նալբանդյան 1
РА,,г.Иджеван,ул. Налбандяна 1
RA IJEVAN St Nalbandyan 1

☎ 00374 263 40313
Էլ. փոստ – ijevanmedikalcenter@mail.ru

02.07.2024թ.
N 351

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ա.Ավանեսյան,

«Իջևանի ԲԿ» ՓԲԸ-ի և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 03.01.2024թ. կնքված N ԻԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-4 ծածկագրով «Իջևանի ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի մատակարարման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Ագաստ» ՍՊԸ-ն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սակայն «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետներում 9, 57, 83 չափաբաժինների մասով իրականցվել է թերի մատակարարում, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի «բ» ենթակետը, «Իջևանի ԲԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծել է պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները:

Պայմանագրի միակողմանի լուծման ծանուցմամբ «Ագաստ» ՍՊԸ-ին առաջարկվել է 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, որպեսզի գործող օրենսդրությամբ «Իջևանի ԲԿ» ՓԲԸ-ն չնախաձեռնի մասնակցին գնման գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց, սակայն «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից մինչ օրս վճարում չի կատարվել:

Ելնելով վերոգրյալից, կայացնում եմ հետևյալ որոշումը՝

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված կարգի, նախաձեռնել գործընթաց և մասնակցին ներառել գնման գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. Անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	Գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքերը			Ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			Խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	Խախտել է պայմանագրով նախատեսված պարտավոր-ությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայամանագրի միակողմանի լուծմանը	Որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Ագաստ»ՍՊԸ	00435781	ք. Երևան, Տ.Պետրոսյան 31/1		V		02.07.2024թ. ԻԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1

«Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի
տնօրեն՝ Է.Գրիգորյան

Կատարող՝
գնումների համակարգող - հաշվապահ
Արփինե Բուղդարյան
Հեռ. (0-33) 26-10-14